

3

Բժ. Ա. ԲՈՒԴՐՈՒՐԵԱՆ



ՍՈՎ

361  
P-91

Հարուսակւում է բաժանորդադրութիւն 1908 թ.

## ՀԱՍԿԵՐ

Մանկական պատկերազարդ ամսագրի:

Բաժանորդագինն է տարեկան 4 ր.

Հասցէն՝ Թիֆլիս, Բէհքութեան փողոց, № 25.


Խմբ. Տրատ. Կ.Օ.Տ. Հիմի 8 ԵԱՆ

ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՊԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1.	Առաջին օգնութիւն մինչև բժշկի գալը (սպառ.)	5 կ.
2.	Վարակիչ հիւանդութիւններ	5 »
3.	Ի՞նչ է սիֆիլիսը	5 »
4.	Առողջապահական զրյացներ	5 »
5.	Ի՞նչ է ժուժկալութիւնը	5 »
6.	Ի՞նչ է անառակութիւնը	5 »
7.	Վեներական ախտեր	5 »
8.	Աշակերտի առողջապահութիւն.	2 »
9.	Մեր նեարդերը	10 »
10.	Սիֆիլիս (բարեփոխուած)	10 »
11.	Առողջ հոգին առողջ մարմնի մէջ	10 »
12.	Գեղձախտ (զօլոտուխա)	10 »
13.	Ո՞վ է յանցաւորը	15 »
14.	Կարիք և բարեգործութիւն	15 »
15.	Ժառանգականութիւն և դաստիարակութիւն	15 »
16.	Մանկավարժական համառօտ զրյացներ	15 »
17.	Մարմամարզութիւն (25 պատկերով)	20 »
18.	Առողջապահական նուէր նորատի կանանց	20 »
19.	Կինը և տղամարդը	15 »
20.	Վիրաբուժական հիւանդութիւն և օպերացիա	5 »

300

1187-ԲՈՒ



361  
Բ-91  
Մ

11 MAR 2013

11 MAR 2010

ԲԺ. Ա. ԲՈՒՂՈՎԵԱՆ

# ՍՈՎ

(Մի պատկերով)

1003  
1154

1. Սովը — սոցիալական չարիք:
2. Սովը զիտական տեսակետից:
3. Սով և յանցագործութիւնն:
4. Սովադէպքերն և անբերրիութիւնները:
5. Սովը չնումն և ներկայումս:
6. Սով և հասարակութիւն:
7. Ներկայիս պահանջները:
8. Մեր հոգսերը:
9. Սովի արմատական բուժումն:



Ա.-ՊԵՏԵՐԲՈՒՀԻԳ  
ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ, ԼԵՇՏՈՒԿՈՎ, ՓՈԴ., 4  
1908

Աշխարհումս կայ մի թագաւոր.  
Այն անողործ և ահաւոր —  
Կորա անունն է սովուր:



### Սովորակական չափել, սոցիալական ախտ:

Համարեա ամեն օր մատնացով է անում մամուլը իր էջերում սովի գերը կեանքի մէջ. բժշկականութիւնն և հասարակական զիտութիւններն ևս չերմագին զբաղւած են այդ չարիքով:

1907 թ. Մոսկվայում կայացած Պիրոգովի համաժողովում սովի մասին մի քանի գիտական զեկուցումն կարգացւեց. զրանցից մի քանիսի, այն է՝ բժ. բժ. Ժրանկովի և Տարասեիչի զեկուցումների զիսաւոր փաստերի և գաղափարների հետ աշխատենք ծանօթացնելու մեր ընթերցողներին:

Պիրոգովի անուան համաժողովները շատ խրատական են, տեղի են ունենում երկու տարին մի անդամ զանազան համալսարանական քաղաքներում. այդ համաժողովներում գիտական-բժշկական զեկուցումներից զատ կարգացւում են նաև հասարակագիտական զեկուցումներ:

Զեկուցողներից մէկը մէջ բերեց բանաստեղծի

Խօսքերը. «Աշխարհումս կայ մի թագաւոր, այն  
անողորմ և ահաւոր — նորա անունն է սով»:

Եւ իրօք որ «նա սոսկալի, տիրօրէն իշխում  
է աշխարհի վրայ»:

Նա գիշեր-ցերեկ անխոնչ կերպով ման է գա-  
լիս երկրի մի ծալրից միւսը, իսկ նրա հետքով եր-  
կայն շարանով ձգւում են շղթայածե բոլոր յան-  
ցադործութիւնները . . .

Որաւը պսակում է «նրան» դափնիներով.  
մարդիկ թաւալում են «նրա» խարազանի տակ՝  
արիւնից և ցեխից երբէք չմաքրուելու համար:

Սպանի՛ր — պահանջում է նա . . . Եւ մի  
յանցագործ ևս աւելացաւ:

Վաճառի՛ր քեզ — հրամայում է սովը և յա-  
ւետ կորած է մի մատաղ կեանք ևս:

Բաղդաւոր են նրանք, որոնց դաւակները չեն  
մեռնում սովից. բաղդաւոր են նրանք, որոնք կա-  
րողանում են խլանալ մարդկալին հառաջների դի-  
մաց:

Դի՛ր ականջդ գեանին. լսում ես հառաչը:

Այդ — երկիրն է հառաչում. զա հառաչն է  
դրկւածների, անտունների, որբացածների, սովա-  
տանջների . . .

Ա.

Սովածութեան զգացումը յայտնի է անձնա-  
կան փորձից. սովածութեան առաջացրած երեսութ-  
ներին հանդիպում ենք երկրի երեսին ամենուրեք,  
պատմութեան բոլոր դարաշրջաններում և բոլոր  
ազգութիւնների մէջ. իսկ մէր մասին խօսելն ան-  
գամ աւելորդ է:

Մօտերքս մի ոռւս հրապարակագիր իրաւա-  
ցիօրէն նկատում է. «Ճնայած Ռուսաստանի աղ-  
դաբնակութեան բազմազանութեան, ցեղալին, կի-  
մայական և հողալին տարբերութեան — նրանց  
բոլորին էլ միացնում է մի ընդհանուր մար՝ աղ-  
քատութիւնը և բոլորի համար ընդհանուր իդէալ՝  
յորենի հայ:

Սովի պատճառած ահազին չարիքը, նրա հետ  
շաղկապւած ցալտուն փոփոխութիւնները մարդուս  
փեղիքական և հոգեկան կեանքում վաղուց ի վեր  
զրաւել են ոչ միայն գիտնականների, այլ և աւելի  
վաղ բանաստեղների, պատմագիրների, օրէնսդիր-  
ների ուշադրութիւնը:

Մեզ չի կարող չապշեցնել իրականութեան  
մէջ գոյութիւն ունեցող հակագրութիւններից մի  
փաստ ևս. մարդ, որ կարծես զիտաւորեալ կերպով  
ամենակեր է ստեղծւել, որ հեշտութեամբ դոհա-  
ցում տալ իր ուտելիքի պահանջին, համարեա բո-  
լոր կենդանիներից աւելի է սովի ենթարկւում —  
ինչպէս բոլորորին իրաւացի կերպով նկատում է  
թժ. Տարասեհիք իր զեկուցման մէջ:

Մեղ հետաքրքրող հարցի զրաւած ուշադրութեան հետևանքները ալևայլ գրականական լիշտատակարանների ձեռվ գտնում ենք ամենահին ժամանակներից սկսած:

Դեռ Մանուի (Հնդկաստանի հին օրէնոգէտ) գրքերում սովոր համարում է աղէտ՝ ընդունակ ամենաառաքինի մարդկանց լանցանքներ կատարել տալու — երեխաններին ծախել, շնենի ուտել և այլն:

Սովի ժամանակ մայրերի իրանց զաւակներին ծախելը մտանացոյց են անում չինացիների պատմական գրքերը, իսկ մեղանում, Ուուսաստանում, հերու մամուլը հրապարակեց, թէ Կազանի նահանգում թաթարները սովի պատճառով իրանց սիրուն աղջիկներին ծախում էին 50—60 բուրլով:

Ողիսւսի ուղեկիցները սովամահը ամենամեծ չարիքն են համարում:

Օվերի իր գրքերում լիշտակում է զազրելի ուտելիքներ, որոնք ստիպւած են լինում գործածել մարդիկ սովի աղջեցութեամբ:

Թողնենք հներին և անցնենք լետագայ հեղինակներին. վերջինների մէջ գտնում ենք սովի միշտը պատկերներ և նկարագրութիւններ, որոնք լանախ ապշեցուցիչ են իրանց գոյներով:

Աշաւասիկ Իգոնինոլի ողբերգական կերպարանքը (Դանթէի «Դժոխք» հեղինակութիւնից), որը բանտում քաղցից, մինը միւսի լետեից կորցնելով իր երեք որդկերանց արդէն կուրացած, շօշափելով գտնում է նրանց գիտակները և ապա

երեք օրւայ ընթացքում ապարդիւն կանչում է իւրաքանչիւրին ըստ անունի, մինչ վերջապէս «սովոր լաղթեց տառապանքին»:

Ո՞վ չի կարդացել Բալբընի Դոն-Ժուան յայտնի գիրքը, որի հերոսն ու նրա ուղեկիցները, նաւարեկութեան ենթարկւելով, իրանց նաւակում կրում են քաղցի և ծարաւի բոլոր տանշանքները, վերջապէս բանը այնտեղ է հասնում, որ ուտում են իրանց աւելի վաղ մահացած կամ վիճակով դատապարտած ընկերներին և մոլի խելտագրութեան մէջ ընկնելով, նետում են ալիքների մէջ և բոլորն էլ կորչում, բացի Դոն-Ժուանը, որին կոհակները ափն են նետում անզգայ, որով և ազատում է:

Մասսայական սովածութեան գեղեցիկ պատկերն է տալիս ֆրանսիացի հեղինակ Ֆլորեր իր Սալամբօ զրւածքում, որտեղ նկարագրւած է Կարթագինէի 40,000 օժանդակ զօրաբանակի տառապանքը:

Նորագոյն հեղինակները, մանաւանդ անմահ էմիլ Զոլան իր «Պարիզի ստամոքս»-ը և «Ս.ծխահաններ» վէպերում — սովածութեան երեսովթները նկարագրում են բժշկական փաստերի հիման վրայ, ընդգծելով այդ գրութեան որոշ սիմպտոմները, ինչպէս թուլութիւն, քնափութիւն, զառանցանք (զել), զլխապաոյտ:

Նորագոյն հեղինակներից Կնուտ-Դամսունը իր «Սով» վէպում, կեանքի դառն բոպէներին իր անձի

վրայ կատարած գիտողութիւնների հիման վրայ, նկարագրում է քաղցածների հոգեկան դրութիւնը:

Եթէ դառնանք ռուս զրականութեան, նրանում կդանենք աւելի շատ նիւթ և դա բոլորովին բնական է:

Ժողովրդի կարիքները ի դէմս ռուս բանաստեղների և հեղինակների ոչ միայն գեղարւեստական նկարագրողներ են գտնում, այլ և հետազտողներ:

Յայտնի Կրապոտկինը իր գրքերից մէկում իրաւացիօրէն նկատում է, թէ Ռուսաստանի քաղաքական, սոցիալական և տնտեսական վիճակի հետ ծանօթանալ ցանկացողը անպայման պիտի դիմի ռուս զրականութեան արտադրութիւններին:

Մտաբերենք Ինչեստնիկովի վիպակները, Նեկրասովի, Նիկիտինի և Կոլցովի ռտանաւորները, որտեղ պատկերացրած է գիւղացու վիճակը. կալում ոչ մի դէզ, շաեմարանում ոչ մի հատիկ, բակում ամայութիւն:

Ներկայումս հետաքրքիր են նաև Լև Տոլստոյի յօդւածները սովի մասին և Կորոլենկոյի գրւածքը սովեալներին օդնելու մասին:

Առհասարակ սովի զրականութիւնը չափազանց բազմութեակ է և ճոխ. նոյն է նաև մեղանում:

Գրականութեան նոյն այդ ճիւղը շատ հարուստ է նաև բժշկականութեան մէջ. օրինակ հանգուցեալ պրոֆ. Պաշուտինի ղեկավարութեամբ լոյս ընծալւեցին մի քանի տասնեակ գրքեր, որոնք

նւիրւած են մարդկալին ցեղի այդ սոսկալի թրշնամու ռւսումնասիրութեան:

Եատ հետաքրքիր է, ուստի և Խրատական իմանալ սովի առանձին օրդանիզմի վրայ գործած ազլեցութեան զիտական անալիզը, հետազոտել, թէ ինչպէս են անդրադառնում ժողովրդական առողջութեան վրայ քաղցածութիւնն և թերակերութիւնը, և, արդիւնքների վրայ հիմնւած, մեր իրականութեան գնահատման փորձը կատարել:

Բ.

Խրաքանչիւր իննդանի արարած ստիպւած է որոշ քանակիով ոլժ մսխել կեանքի ներքին և արտաքին զործունէութեան համար, իսկ ապաքիւնները նաև տարութիւնը որոշ աստիճանի վրայ պահպանելու:

Այդ ոյժը ստացւում է արտաքին աշխարհից սննդանիւթի ձևով, որի պէտքական մասերը մըտնում են օրդանիզմի մէջ, իսկ անպէտքները արտածում:

Սրանով ակնյալանի է ուրեմն, որ կերակրւելը, սնունդ ստանալը անհրաժեշտութիւն է. դա հաստատում են նաև անմիջական բնազդն ու տարրական զիտողութիւնը:

Սննդառութեան պրոցեսների տարրալուժումն ու զիտական բժբռնումը հնարաւոր գարծաւ ֆիդիքալի և քիմիալի զարգացմամբ միայն:

Կենսական հաւասարակշռութիւնը պահպա-

ներու անհրաժեշտ զանազան սննդանիւթերի քանակութեանց նկատմամբ առաջին ճշգրիտ տեղեկութիւնները սահմանել է Վուատար, որը ցոյց տւեց, թէ մարդ պէտք է դործածէ օրական 118 գրամ սպիտակուց, 50 գրամ ճարպ և 500 գրամ ածխաջրալին նիւթեր:

Այլ գիտնականների լետազայ աշխատանքները մի փոքր կերպարանափոխեցին այդ թւերը, սակայն էութիւնը մնաց անփոփոխ:

Բացի այդ, կենսական պրոցեսների համար անպայման անհրաժեշտ է չուր և հանքային աղեր, թէև դրանք իրանք չեն կարող էներգիայի աղբիւր հանդիսանալ:

Ներկայումս, մի շարք գիտնականների հետազոտութիւնների շնորհիւ, մեզ յայտնի է, որ կեանքի և աշխատունակութեան պահպանման համար մարդուս անհրաժեշտ է հետեւեալ քանակով կալորիա \*):

Հանդիսատ վիճակում մարմնի ծանրութեան իւրաքանչիւր կիլոգրամին օրական 30—34 կալորիա, թէթև աշխատանքի ժամանակ՝ 34—40. միջին աշխատանքի ժամանակ՝ 40—45, իսկ լարւած աշխատանքի դէպքում մինչև 60 և աւելի կալորիա, այսինքն ընդունելով մարդուս միջին

\*) Կալորիա. — Գիտութեան մէջ իբրև տաքութեան միութիւն ընդունւած է տաքութեան այն քանակութիւնը, որը անհրաժեշտ է ջրի մասսայի մէկ միութեան տաքութիւնը մի աստիճանով բարձրացնելու համար:



քարշը 70 կիլոգրամ՝ օրական 4200 և աւելի կալորիա:

Իմանալով, որ սպիտակուցի կամ ածխացրալին նիւթերի իւրաքանչիւր գրամը օրգանիզմին 4,1 կալորիա է տալիս, իսկ ճարպերի մի գրամը 9,3 և իմանալով, որ այդ բոլոր նիւթերը ընդունակ են որոշ չափով միմեանց փոխարինելու, հեշտութեամբ կարող ենք սահմանել այլևայլ պայմաններում գտնւող անձանց սնունդի նորման, իսկ միւս կողմից գործածւած ուտելիքից եզրակացնել օրգանիզմի ստացած էներգիայի քանակութիւնը:

Լրացուցիչ ձեռվ նկատենք, որ նման նորմաներ սահմանելով, չպէտք է մոռանանք, որ սնունդը ոչ միայն կարորիայի քանակութեան կողմից բաւարար պէտք է լինի, այլ և պիտի ունենայ մի շարք ուրիշ յատկութիւններ՝ դիւրամարսութիւն, որոշ բազմազանութիւն, հաճելի համ և ալին:

Ցիշեալ յատկութիւնների գոլութիւնից է կախւած յայտնի չափով, թէ ընդունւած ուտելիքը, հետեւապէս և նրա ներմուծած էներգիան որչափ կարող է իւրացնել մեր կազմւածքը և ողբանօգուտ ստանալ նրանից:

Վերջապէս պէտք է նկատենք, որ որոշ սնրդարար նիւթերի միւսներով փոխարինումն սահմանափակ է և դա պիտի ասել մանաւանդ սպիտակուցային նիւթերի մասին, որոնք չեն կարող լիովին փոխարինել ոչ ճարպերով, ոչ էլ ածխաջրալին նիւթերով:

Սպիտակուցային նիւթերի որոշ նւազագոյնը,

մարմնի քարշի իւրաքանչիւր կիլօիխ օրական մօտ  
ձէկ զրամ անպայման անհրաժեշտ է:

¶.

Ուտելեղէնի քանակութեան պակասութիւնը  
քաղցածութիւն է առաջացնում, որը կարող է  
լիակատար լինել, երբ ուտելիքը բոլորովին բացա-  
կայում է և ոչ լիակատար (կիսաքաղցութիւն)՝  
երբ վերջինս անբաւարար է:

Այդ անբաւարարութիւնը կարող է լինել ընդ-  
հանուր, աւելի կամ պակաս համաչափութեամբ  
վերաբերելով սննդարար նիւթերի բոլոր տեսակ-  
ներին և կամ թերի է լինում պակասում է  
այդ նիւթերի ուեէ տեսակը. վերջին դէպքում ա-  
սում են սպիտակուցալիխն, ճարպալիխն, աղալիխն և  
այլ քաղցածութիւններ:

Կեանքում յանախ հանդիպում ենք կիսա-  
քաղցութեան դէպքերի. լիակատար քաղցածու-  
թիւնը համեմատարար սակաւագէպ է:

Բնութեան մէջ ևս պատահում է քաղցածու-  
թիւն՝ կամ իբրև ֆիզիոգիական երեսլթ, օրի-  
նակ՝ ձմեռալիխն քնափութեան ենթակայ կենդանի-  
ների միջև և կամ իբրև հիւանդական (պատոզիա-  
կան) երեսլթ:

Մի կողմ թողնենք լիակատար սովածութիւնը  
ճամբորգութիւնների, նաւարեկութիւնների և այլ  
դէպքերում, երբ հասկանալի պատճառներով չի  
կարելի գիտական գիտողութիւններ կատարել:

Մէնք պէտք է կամ փորձեր կատարենք կեն-  
դանիների վրայ և կամ դիմենք մի քանի, թէկ  
սակաւաթիւ, բայց խնամքով կատարւած դիտո-  
ղութիւններին, որոնք տեղի են ունեցել զիտական  
կամ աւելի յանախ սպորտալիխն նպատակով ինքնա-  
յօժար սովածութեան ենթարկող անձանց վրայ,  
ինչպէս օրինակ Տաններ, Սուկցի և ալլք:

Այս վերջին տեսակի դիտողութիւնները հնա-  
րաւորութիւն են տալիս կենդանիների վրայ կա-  
տարւած փորձերի հետ համեմատութեան մէջ  
դնելու և այդպիսով լրացնել ընդհանուր պատ-  
կերը:

Զպէտք է մոռանանք, որ քաղցածութեանը  
կարող է ուղեկցել ջրի բացակալութիւնն ևս, և  
այդ դէպքում աւելի դժւար է լինում զիմանալ  
նրան:

Քաղցածների վրայ կատարւած դիտողութիւն-  
ները ցուց են առել, որ քաղցածութեան հետ շաղ-  
կապւած են մի քանի անհանով, աւելի կամ պակաս  
ծանը զգացումներ՝ քաղցի զգացմունք, ցաւեր,  
անհանգստութիւն:

Ապա վերջինները չքանում են և կենդանին,  
ինչպէս և մարդը տակաւ առ տակաւ մատնում է  
անզգայութեան (ապատիալիք) և քնափութեան,  
այս կացութեան մէջ էլ վրայ է հասնում մահը.  
համեմատաբար սակաւագէպ են չղածզութիւնները:

Նկատելի է լինում քարշի պակասումն, մշտա-  
տե նիհարում, բոլոր՝ մանաւանդ ստամոքսա-աղի-  
քալիխն արտաթորութիւնների նւազումն, վերջին

շրջանում տաքութեան աստիճանի ընկնելը և  
այլն:

Քաղմաթիւ փորձերի հիման վրայ հաստատ-  
ւած է, որ մահացումը տեղի է ունենում սովո-  
րաբար այն ժամանակ, երբ կենդանին իր սկզբնա-  
կան քարշի 40% է կորցրել. ընդհանրապէս մարմնի  
ծանրութեան  $\frac{1}{3}$  մասի կորուսար անպայման սպառ-  
նալից է կեանքի համար:

Քաղցածութեան շրջանի տեսականութիւնը  
զանազան կենդանիների մէջ տարբեր է. որքան  
փոքր է կենդանին և չահել, այնքան կարճատե է  
շրջանը:

Դեռ ևս չիպոկրատին յայտնի էր, որ քաղցին  
ամենից աւելի զիմանում են ծերունիները, յետու  
հասակաւորները, ապա երեխաները և սրանց բո-  
լորից ամենահեշտ կերպով տանում են քաղցր  
նրանք, որոնք առողջ և կենդանի տեմպերամենա  
ունեն:

Փորձերով հաստատւած է, որ շան մատաղ  
ժագերը սատկում են 2—3 օրից, երկշաբաթական-  
ները՝ երկու շաբաթից, իսկ պառաւած շները՝  
 $1\frac{1}{2}$ —2 ամսից:

Մօտաւորապէս նոյնն է նաև զանազան հասա-  
կի մարդկանց կեանքի միջին տեսականութիւնը  
քաղցածութեան դէպքում. մինչեւ երկու ամսական  
տղաներինը 3—4 օր, ծերունիներինը մինչեւ երկու  
ամսիս:

Եթէ վերցնենք տարբեր մեծութեամբ կենդա-  
նիներ, կտեսնենք, որ մին, օրինակ, կամ ուղար-

կարող են ամիսներ ապրել, ծովախողը կամ նա-  
դարը՝ տասն օր, ագռաւը՝ չորս օր, իսկ փոքրիկ  
թռչնիկները մի օրից ոչ աւել:

Այս փաստերը մեզ համար լիովին հասկանալի  
կղառնան, եթէ ուշադրութիւն դարձնենք այն  
հանգամանքի վրայ, որ քաղցածութեան ժամանակ  
ևս նիւթերի փոխանակութիւնը (կենսական պրո-  
ցեսը) սովորական ուժգնութեամբ է կատարւում,  
այն է հանգիստ կացութեան մէջ մարմնի ծան-  
րութեան իւրաքանչիւր կիլոյին (մօտ  $2\frac{1}{2}$  ֆունտ)  
մսխւում է օրական 30—32 կալորիա, ինչպէս և  
սովորական սննդառութեան ժամանակ:

Օրգանիզմը, ըստ երկոյթին, անընդունակ է  
իւր ծախսերի մէջ որոշ անտեսութիւն պահպա-  
նելու:

Քաղցածութեան ժամանակ խոտածարակները  
կարծես մսակեր են դառնում և ապրում են իրանց  
օրգանիզմի ճարպերի և սպիտակուցի հաշւին:

Օրգանիզմը ամբողջ էներգիան քաղցածութեան  
ժամանակ իր սեփական հիւսւածքից է վերցնում,  
ուստի և որքան ուժգին է փոխանակութիւնը,  
այնքան շուտով է վրայ հասնում հիւծումն ու  
մահը:

Որ մատաղ և փոքր կենդանիների փոխանա-  
կութիւնը աւելի մեծ եռանդով է կատարւում՝  
դա հանրածանօթ իրողութիւն է. և դրա համե-  
մատ էլ քաղցածութեան ժամանակ նրանց մար-  
մնի քարշը շատ մեծ կորուստ է կրում:

Այսպէս, օրինակ, եթէ ի նկատի առնենք մե-

Ճութեան տարբերութիւնը, մարդ կորցնում է օրական իր քարշի մօտ  $1^{\circ}/_0$ , կատուն՝  $3^{\circ}/_0$ , ծովախողը՝  $5^{\circ}/_0$ :

Շատ դանդաղ փոխանակութիւն ունեցող կենդանիները, օրինակ պաղարիւնները, ծկները, չափազանց երկարատև կարող են տանել քաղցր:

Ինըն ըստ ինքեան հասկանափի է, որ իրական ազգեցութիւն են գործում քաղցածութեան ընթացքի և տեականութեան վրայ նաև սննդառութեան վիճակը քաղցածութիւնը սկսւած ժամանակ և այն պայմանները, որոնք ուղեկցում են նրան:

Լիակատար հանգստութիւնը, բոլոր գործառնութիւնների (ֆունկցիաների) գագարումն հնարաւորութիւն է տալիս ձմեռող կենդանիներին այդքան երկար ժամանակ առանց սննդառութեան մնալու:

Նոյն միջոցին են դիմում նաև մարդիկ, զետակաբար թէ անգիտակցաբար:

Այսպէս, օրինակ, հաղորդել էին թէ Պակովի նահանգի գիւղացիք սովի ժամանակ հազնելիս են եղել իրանց մուշտակները (տուլուպ), բարձրանարկ են եղել փէչի վրայ կամ մէջը և լուռ ու անշարժ մնացել են այնտեղ՝ հետեւելով կարծես արջի օրինակին:

Հասկանալի է, որ այդպիսով նւազում է տաքութեան կորուստը, աշխատանքի վրայ կտտարւած միսիր և հնարաւոր է դառնում կետները աւելի երկար պահպանել:

¶

Օրգանիզմը իր պահեստն ու հիւսւածքը մըսխում է որոշ հետեւողականութեամբ՝ սկզբում այն նիւթերը, որոնք մնացել են վերջին սննդառումից, ապա արագ, հէնց առաջին օրերի ընթացքում ածխաշրային նիւթերը, լետոյ ճարպերը:

Սպիտակուցային նիւթերը շատ զանդաղ են մսխուում, լսնալողութիւն է նկատւում մինչև վերջին հնարաւորութիւնը և միայն մահից առաջ նկատելի է նրանց մասսայական մսխումն, ինչպէս ցոյց է տւել մէզի տարրալուծումն, որի բորակածնի (աղոտի) քանակը բաւականաչափ բարձրանում է:

Ընդ նմին, առաջին օրերի սուր տատանումներից յետոյ, հաստատւում է մսխի լիովին որոշ մշտական նորման, որը կրկին փոխւում է միայն վերջին շրջանում:

Եթէ հիմա հարց տանք, թէ ինչպէս է տարբաշխուում այդ միսիր զանազան օրգանների (գործարանների) և հիւսւածքների միջև, կտեսնենք, որ շատ անհամաչափ է:

Ամենից աւելի տուժում է ճարպային հիւսւածքը, որը զրեթէ բոլորովին կորչում է ( $95^{\circ}/_0$ — $97^{\circ}/_0$ ), ապա մկանները, մի քանի օրգանները, ինչպէս փայծաղը, լեարզը. իսկ կեանքի համար ամենակարևոր օրգանները՝ սիրան ու նեարդային կենարոնական համակարգութիւնը, ընդհակառակը, համարեա անփոփոխ են մնում:

Ինչպէս էլ որ լինի, քաղցածութեան ժամա-

նակ սննդանիւթի համար զանազան հիւսւածքների միջև տեղի ունեցած կուռում ուղեղի և սրտի վանդակիկները յաղթող են հանդիսանում, որը հասաւատում է թէ խոշորացոյցով և թէ դիտական փորձերով:

Քաղցածութեան հոգեկան երկոյթների մասին ծշլրիա տեղեկութիւններ քիչ են, չնորհիւ այն հանդամանքի, որ կենդանիների վրայ կատարւած փորձերը դրեթէ ոչ մի արդիւնք չեն տալիս, իսկ մարդկանց վրայ շատ քիչ են կատարւած նման փորձեր:

Այդ ուղղութեամբ կատարւած փորձերի նշանակութիւնը սահմանափակուում է մի կողմից նրանց սակաւաքսնակութեամբ, միւս կողմից էլ մանաւանդ նրանց կարճտուեութեամբ, օրինակ երեք օրով, որի ընթացքում չեն կարող քիչ թէ շատ լուրջ երկոյթներ առաջանալ:

Ընդհանուր առմամբ հաստատւած են մարձնական և հոգեկան յոգնածութեան նշանները, մտածողութեան որոշ խանդարումն, ի միջի ալլոց մի բժիշկ իր և իր ընկերոջ վրայ կատարւած փորձից նկատել է, որ երաղում առատ և համեղ կերակուրներ է տեսնում:

Աւելի սուր քաղցածութեան դէպքում կարող է զառանցանք (հալլիւցինացիա) տեղի ունենալ \*). իիշնք լէօնիդ Սնդրէկի «Մարդու կեանքը» վէպը,

\*) Տե՛ս իմ «Սնապաշտութիւն և կախարդութիւն» գիրքը:

որտեղ քաղցածութեան ենթակալ զոյգի՝ մարդ ու կնոջ ֆանտազիաների, եթէ ոչ զառանցանքների պատկերացման մի շարք նկարագրութիւններ են նեկրւած:

Որ կարծատե քաղցածութիւնը կարող է նեարդահոգեկան աշխարհը բոլորովին չճնշել, այլ մինչև իսկ մի փոքր զրգուել՝ դա յայտնի է:

Սակայն քաղցածութեան բոլոր աստիճաններում անպայման անտարբերութիւն, անզգայութիւն (ապատիա) է առաջանում, երբեմն էլ կարող է նոյնիսկ գոհացութեան և բարօրութեան զգացմունք ծնւել:

Ներկայումս մեղանում կան երեխ այնպիսիները, որոնք հացագուլ են սարքել բանտերում, յամենայն գէպս շատերը լսած կլինեն մասնակցողների պատմածները կամ լրազրներում կարգացած. ահա զրայնդհանուր պատկերը. արագօրէն զարգանում են հոգեկան և նեարդային ժանր խանդարումներ, ընդհանուր հիւծումն (ուժասպառումն) և յաճախ մի հացագուլը երկար ժամանակ խանդարում է առողջութիւնը:

Նոյնքան և աւելի ևս ժանր երկոյթներ դիտենք նաև ձամբորդների (ինչպէս լեհնգսոնի) նկարագրութիւններից. բացի այդ նոյնն են հաստատում նաև նաւաբեկութեանց հետեւանքները, ինչպէս հռչակաւոր «Մելուզի» խորտակումն:

Այստեղ արգէն տեսնում ենք ցնորումն էլ, ցնորական գէն էլ — մի խօսքով՝ տառապանքների ամբողջ մի շարք:

ինչով կարելի է բացատրել այդքան սուր տարբերութիւնը:

Զէ՞ որ այդպիսի երեսիթներ չնկատեցինք ո՞չ փորձերի ժամանակ, ոչ էլ երկարատև պահեցողութեան ենթակայ անձերի վերաբերմամբ:

Ակնյալանի է, որ խնդիրը այն պայմանների տարբերութեան մէջ է, որոնց մէջ ընթանում է քաղցածութիւնը. աղէտների ենթակայ անձանց քաղցածութեան ժամանակ տւելանում են նաև ուրիշ վիճակար մոմենտներ, ինչպէս՝ ցուրտ, մահւան երկիւղ, այլևայլ տանջանքներ (ինքնակամ քաղցածութեան մատնւելու դէպքում այդ բոլոր բացակայում է). Նեարդային համակարգութիւնը կորցնում է իր հաւասարակշռութիւնը և առաջանում են մի շարք տւելի կամ պակաս ժանր նեարդային երեսիթներ:

Ե.

Ի՞նչ է կատարւում ոչ լիակատար քաղցածութեան դէպքում. էապէս այսաեղ խոշոր տարբերութիւններ չկան:

Օրգանիզմը, անկարող լինելով որոշ չափից տւելի կրծատել միսխր, սննդառութիւնը անհրաժեշտ չափից պակաս լինելու դէպքում ստիպւած է լինում էներգիայի պակասորդը իր միջից վերցնել:

Տեղի է ունենում ինքնավառման նոյն երեսիթը, որը նկատւում է լիակատար քաղցածութեան դէպ-

քում ևս, միայն պակաս ուժգնութեամբ, այնպէս, որ պրոցեսը կարող է զգայի չափով տւելի տեսել՝ ամիսներ և տարիներ. հէնց այդ երկարատեսութիւնը արգէն դժւարացնում է հետազօտութիւնը և համարեա անհնար է դարձնում:

Սնտարակոյս, ամբողջ պրոցեսը ընթանում է նոյն տիպով, որով և լիակատար քաղցածութիւնը. սակայն, շնորհիւ նրա երկարատեսութեան, հնարաւոր է զառնում մսխի նւազացման որոշ համակերպումն մշակել, թէև փոքր սահմաններում:

Տրամադրութիւնը գառնում է անզգայ (ապատիկ), անտարբեր. նեարդային և հոգեկան էներգիան թուլանում է. մի գիտնական անմիջական փորձերով ցոյց է տուել, թէ սպիտակուցային նիւթերով աղքատ սնունդ ընդունող և միենոյն ժամանակ աշխատող անձինք ենթարկւում են սակաւարիւնութեան (անեմիա), որը, պայմանների բարւոքւելու դէպքում, անցնում է:

Որովհետեւ կեանքի մէջ սննդառութեան պակասութիւնը կապւած է լինում մի շարք ուրիշ անբարեյաչող աղդեցութիւնների հետ, ուստի հասկանալի է, որ այդ պայմանները գումարւելով առաջ են բերում օրգանների և հիւսւածքների տւելի սուր կերպարանափոխութիւններ, արեան բաղադրութեան և անօթների զանազան փոփոխութիւններ և զարգանում չրդողութիւն և ուռուցքներ և այլն:

Հէնց զրանից էլ առաջ է եկել «քաղցից ուռչել» նիշտ արտայալտութիւնը:

Մասնակի քաղցածութեան դէպըում, պատկերը, ի հարկէ, զանազան է լինում. աղային քաղցածութեան դէպըում, օրինակ, ուստելիքի մէջ հանքալին աղերի կատարեալ բացակայութիւնը նոյն իսկ աւելի շուտ է մահացնում, քան կերակրի կատարեալ բացակայութիւնը:

Ակնյալու է, որ աղերը իրանք էներդիալի աղբիւր չինելով հանդերձ, անհրաժեշտ են օրդանիզմի մէջ կատարւած քիմիական և ֆիզիքական պրոցեսների կանոնաւոր ընթացքի համար, ուստի նրանց բացակայութիւնը առաջ է բերում այդ պրոցեսների արագ խանդարումն, որը կեանքի համար տանելի չէ:

Կեանքի մեքենան չի կարող գործել առանց աղերի, ինչպէս շոգեմեքենան՝ առանց իւղի:

## Զ.

Սովածութիւնը հիւանդացման և այլասեռման հակող կարեոր գործօն է:

Այդ հաստատող նշգրիտ և անվիճելի փաստեր կան զիտութեան մէջ:

Փորձերով հաստատած է, որ քաղցածութիւնը կարող է թուլացնել և ոչնչացնել բնական անխոցելիութիւնը \*):

Ալդակս օրինակ քաղցի ենթարկւած աղաւնիներն ու հաւերը զգայուն են դառնում դէպի

սիրիրախտը. մէկից հինգ օր (1—5) քաղցածութեան ենթարկւած ծովախոզերը չըի մէջ ընկղմելու դէպըում սովորականներից շուտ են շնչահեղծ լինում, այն է զգայուն են դէպի շնչահեղծութեան (ասդիկսիա):

Մի զիանական ցոլց է աւել, որ սնունդից դրկւած կենդանիները գժւարութեամբ են տանում ցաւի գրգռումները՝ տատարակի քաղցած ծագերը ստակում են, երբ մի քանի անդամ կմշտում ես նրանց:

Մի խօսքով օրդանիզմի պաշտպանողական և կանոնաւորիչ բոլոր գործիքները քաղցածութեան ժամանակ աւելի կամ պակաս չափով խանդարում են:

Նոյնչափ անբարեխաջող հետեւանք է ունենում մնողների քաքցածութեան ենթարկւելը նրանց սերունդի համար:

Պրոֆ. Պաշուտկինը կլինիկալի լաբորոտորիայում այսպիսի փորձեր են կատարւել, արուներին և էգերին լզութիւնից առաջ և էգերին լզիութեան շրջանում կրկին քաղցածութեան են ենթարկել. փորձերը կատարւել են շների և ձագարների վրայ:

Նոյնդը սովորական նորմալից մինչև իսկ աննշան քանակութեամբ ( $1/10 - 1/3$ ) պակասեցնելու դէպըում և ոչ չափազանց երկար փորձերից լետոյ սերունդի կրած փոփոխութիւնը ակնյալտնի է դառնել:

Քակորի (արտաթօրութեան) քարշը մօտաւո-

\*) Ցե՛ս իմ «Երկու խօսք զիւղացուն» գրքոյկը

բապէս սովորականն է մնացել կամ շատ քիչ է նւազել, սակայն սուր փոփոխութիւն է կրել ծագերի հիւսւածքների բաղադրութիւնը՝ դառել են շրալի, պակասել է նարպի ու ֆոսֆորի քանակը և կենսունակութիւնը զգալի չափով նւազել:

Երբեմն ծնւել են մահացած ծագեր, երբեմն էլ ծնւածները մահացել են աննշան պատճառ-ներից:

Ամենից աւելի դօրեղ է ծնողների երկսի բաղ-ցածութեան ազգեցութիւնը միասին, ապա գալիս է մօր ազգեցութիւնը, յետոյ հօրինը:

Այնուամենայնիւ վերջինի ազգեցութիւնն է բաւականաչափ սուր է լինում. երբ բաղցածու-թիւնը շատ երկար է տեսում, արուների արտա-գրողական ոյժն էլ է նւազում, իսկ մարմնի ծան-րութեան 26% կորցնելու դէպքում բոլորովին կոր-չում է:

Կանքի մէջ ևս նկատելի են յարանման երե-ւոյթներ: Պարիզի պաշարման ժամանակ (յայտնի է, որ ֆրանսիացիք սովից մկներ էին ուտում) սաղմնաւորւած և մնւած ֆրանսիացիներից շատերը աչքի էին ընկնում իրանց թուլութեամբ, հասակի փոքրութեամբ և այլն, ինչպէս ցոյց է տուել 90-ական թւականների սկզբներին զինւորակոչու-թեան առթիւ կատարւած վիճակագրութիւնը.— ուստի և զինւորական ծառայութեան համար ան-պէտքները մեծ տոկոս են կազմել:

Այդպիսով, թէ տեսական կշռադատութիւն-ների և թէ մի շարք փորձերի անվիճելի արդիւնք-

ների հիման վրայ մենք պէտք է եղբակացնենք, որ ամեն մի քիչ թէ շատ երկարատև քաղցածութիւն ամենաէական ազգեցութիւն է գործում օրդանիղմի վրայ:

Քաղցածութիւնը թուլացնում է նրան ամեն կողմից, զգայուն է զարձնում դէպի վարակիչ հի-ւանդութիւնները, նւազեցնում է աշխատունակու-թիւնն ու հողեկան արիութիւնը և, այդ բոլորից զատ, կորսարեր ազգեցութիւն գործելով սերու-ղի վրայ, այլասեռման էական գործոններից մէկն է դառնում:

Է.

Ի՞նչ է երևան հանում կեանքը, իրականու-թիւնը, որտեղ և ի՞նչպէս է պատահում սովածու-թիւնը և ի՞նչպիսի հետեւանքներ է մնում:

Բնութիւնը իր փորձերը կատարում է ահազին չափով և չափից գուրս բազմազան պայմաններում, սակայն այստեղ մենք լոկ դիտողներ ենք հանդի-սանում, չենք կարող ըստ մեր ցանկութեան փո-փոխել այն պայմանները, որոնց վիճելի լինելը չա-փազանց դժւարացնում է տարրալուծութիւնը (անալիզը):

Այն ինչ լարորոտորիայում, կինիկաներում այդ հնարաւոր է, ուստի և արդիւնքներն այստեղ շատ աւելի անվիճելի են ու ապացուցիչ, իսկ ապացու-ցելիութիւնն ու անվիճելիութիւնը առանձնապէս

անհրաժեշտ են սոցիալական երեսյթներ զնահատելիս . . .

Սկսենք սովորածութեան աւելի սուր արտայայտութիւններից՝ անբերրիութիւնից առաջացած սովորից,

Դրանք յայտնի են մարդկային ամբողջ պատմութեան ընթացքում, բոլոր ժամանակներում և ամենուրեք. անկասկած է սակայն, որ կուլտուրալի գարգացմամբ դրանք աւելի ու աւելի սակաւագեալ են դառնում,

Այդպէս, Արևմտեան Եւրոպակում դրանք նախին դարերում համեմատաբար յաճախ էին պատահում, սակայն ժթ-րդ դարի ընթացքում աստիճանաբար վերանում են:

Այդ դարի առաջին կիսում գեռ յիշելի են իրլանդիայի և Սիլեզիայի \*) սովերը, բայց երկրորդ կիսում գեթ իրբե քիչ թէ շատ լայն ժողովրդական աղէտ՝ ինչպէս օրինակ Տաճկահյաստանում՝ տեղի չի ունեցել, թէև իտալիան ժամանակ առ ժամանակ տուժում է անբերրիութիւնից:

Այնտեղ, իտալիակում մենք հանդիպում ենք սովորաբար միայն թերակերութեան երեսյթների, որոնք աեղի են ունենում միջին հաշով բաւարար սնունդ ստացող որոշ դասակարգերի և ազգաբնակութեան յայտնի մասերի մէջ:

Իրբե լուսաբանութիւն, մէջ բերենք մի քանի տեղեկութիւններ.

Ամերիկայում այլեւայլ հետազօտողներ, ի նկատի առնելով միջավայրի բոլոր պայմաններն և աշխատանքի բոլոր հանդամանքները, հետեւեալ նորմաներն են սահմանել.

Միջին աշխատանքի դէպքում անհրաժեշտ է 150 դրամ սպիտակուց, 150 գր. ճարպ, 500 գր. ածխաշրային նիւթեր և 4060 կալորիա. լարւած աշխատանքի դէպքում՝ 175 գր. սպիտակուց, 250 գր. ճարպ, 650 գր. ածխաշրային նիւթեր և 5700 կալորիա:

Ամերիկացիների սննդառութեան վերաբերեալ տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ նրանք նոյնչափ էլ ստանում են. օրինակ Զիկադոյի ածենապատ ընտանիքներումն անգամ իւրաքանչիւր անգամը ստանում է մօտ 3425 կալորիա:

Նոյնն է նաև Սկանդինավիայում, որտեղ 70 կիլո կշռող իւրաքանչիւր անհատին անհրաժեշտ է օրական 3466—4832 կալորիա:

Բաւարար է նաև Գերմանիայի, Ֆրանսիայի և այլ երկրների զիւղացիների սննդառութիւնը, թէև ֆրանսիացոց Հենրիխ Դ. թաղաւորի երազը, որ ամեն մի զիւղացի ճաշին հաւ ուտի՛ չի կարելի իրականացած համարել:

Ընդհանրապէս վատ վիճակի մէջ է բանորների սննդառութիւնը. այդ տեսակեաից պրոլետարիատը անտարակուս ներկայ կարգի խորթ զաւակն է հանդիսանում և մենք իւրաքանչիւր քայլափոխում հանդիպում ենք անբաւարար կամ հազիւ գոհացուցիչ սննդառութեան:

\*) Տե՛ս իւր «Բուդութ Ա. Արևով» գրքով

Մէջ բերենք մի բանի օրինակ. Բերլինի բան-  
տորական խոհանոցների բաժինը (պորցիան) 1833  
կալորիա է. Բերլինի պաղիրոս շինող բանւորուհի-  
ները գործադրում են օրական 1988 կալորիա,  
կաղմարարուհիները՝ 1663:

Կան ի հարկէ աւելի բաղդաւորներ, ինչպէս  
օրինակ յախնի կրուպպի՛ թնկանօթների և հրա-  
զէնների արքայի բանւորները. գործարանային (ֆար-  
րիկայի) բանւորները միշին հաշով՝ 4395 կալո-  
րիա են գործադրում:

Իսկ սաքսոնական չուլհակները իրանց բարշի  
մի կիլոյին մսխում են 29 կալորիա, այն է՝ նոր-  
մայից (30 կալ.) պակաս:

Այդպիսի վիճակը առաջ է բերում օրդանիզմի  
բոլոր գործառնութիւնների թուլացումն և պէտք  
է որ սաստկացնի հիւանդացումն ու մահացումը:

Զանազան դասակարգի և զբաղմունքի ան-  
ձանց կեանքի միշին տեականութեան վիճակա-  
գրութիւնը (ստատիստիկան) լիովին համոզեցու-  
ցի կերպով հաստատում են որ այդ բոլորը իրա-  
կանութիւն է:

Դրա հետ միաժամանակ նկատում է նաև  
այլասեռումն \*):

Դեռ ժթ-րդ գարի սկզբին պրոֆ. Վիլերմէն  
ասում է. «որքան հարուստ է երկիրը, որքան ա-  
ւելի է բարօրութիւնը, այնքան բարձր է բնակիչ-

\*.) Տե՛ս իմ «Ժառանդականութիւն և դաստիարա-  
կութիւն» և «Ուղեղի սիֆիլիս» գրքերը:

ների հասակը և արագօրէն է կատարւում հասակ-  
առութիւնը»:

Ապա շարունակում է. «զրա վրայ ազդեցու-  
թիւն է գործում զգեստը, բնակարանը, սակայն  
ամենից աւելի սնունդը. կարիքն ու նրան ուղեկ-  
ցող պայմանները նւազեցնում են մարմնի զարգա-  
ցումն ու նրա մեծութիւնը»:

20,000 աշակերտի վրայ կատարւած հետա-  
զոառութիւնները ցոյց են տւել, որ մարմնական և  
մտաւոր զարգացումը զուգահեռաբար են ընթա-  
նում, որ հետեւապէս ընդհանուր զարգացման ան-  
բարելաջող պայմանները անբարելաջող են նաև հո-  
գեկան զարգացման համար:

Այնուամենայնիւ պէտք է խոստովանել, որ  
ժողովրդական սննդառութեան տեսակէտից արե-  
մուտքում ընդհանուր առմամբ ահազին առաջա-  
զիմութիւն է կատարւել և զրա հսմեմատ խոչըր  
չափով և արագօրէն նւազում է մահացութիւնը,  
մեծանում է կեանքի միշին տեականութիւնն  
և այլն:

Այսպէս, օրինակ, Լանդոնում ժէ-րդ գարում  
մահացումն հազարից 42,1 էր, ժը-րդ գարում՝  
35,5, իսկ ժթ-րդ գարի ընթացքում 24,9-ից իշաւ  
18,0; Գերմանիայում ժթ-րդ գարի վերջին քառոր-  
դի ընթացքում մահացումը 26,2-ից իշաւ 20,6.  
Սւստիայում 30,7-ից իշաւ 24,9 և այլն:

Է.

Այլ բան է մեզանում. Եթէ մի կողմ թողնենք ասիական պետութիւնները՝ Հնդկաստանն ու Չինաստանը, դուրս կգայ, որ Ոռւսաստանը սովի կլասիկ երկիր է:

Պրոֆ. Ռոմանովիչը Ոռւսաստանի 1891 թւականի սովի վերաբերեալ իր գասախօսութեան մէջ իրաւացիօրէն մատնանշում է, թէ անբերրիութիւններն ու սովերը ուսւու կեանքի խրոնիքական, կենցաղական երկասիթն են կազմում նրա՝ ուսւու ազգի սկզբնաւորութեան հէնց առաջին օրերից. Թէ սովից դեռ երկար ժամանակ պիտի առւմեն յաջորդ սերունդները իրականութիւնը արդարացրեց այդ միաբը:

Պատմութիւնը ցոյց է տալիս, որ ժարդ դարից մինչեւ ժղ-րդ դարը անբերրիութիւնը Ոռւսաստանում կրկնւել է միշին թւով իւրաքանչիւր դարում ութն անդամ՝ 13 տարին մի անդամ. ապա աւելի յաճախ ժր-րդ դարում՝ 34 անդամ. ժթ-րդ դարում այդ իւրատեսակ պրոցեսը առաջ է զնում և 1854 թւականին միայն 35:

Վերչապէս 90-ական թւականներին Ոռւսաստանին տիրում է համատարած սով դրեթէ առանց ընդմիջումի:

1907 թւակ. 29 նահանգում անբերրիութիւն է տիրում և սահմանափակ հաշւետեսութեամբ անդամ մօտ 25 միլիոն հոգի սովածութեան են մատնւած:

Մեղանում՝ Ոռւսաստանում, չնայած պետութեան ահազին մեծութեան, չնայած նրա երկրագործական բնոլթին, չնայած վերջապէս այն հանգամանքին, որ ընդհանուր առմամբ միշտ էլ աւելորդ հաց դանւում է արտահանելու — այդ բոլորը իրողութիւն է:

Անբերրիութիւնը ներկայումս էլ անհրաժեշտօրէն կապւած է սովի հետ, ինչպէս հնումը, երբ ոչ ճանապարհներ կային, ոչ հաղորդակցութիւն կար և ոչ էլ կուլտուրալի այլ նւաճումները, որոնք հնարաւորութիւնն են տալիս Արևմտեան Եւրոպալին մարտնչել թէ՝ բնութեան, և թէ իր կազմի այս կամ այն թերութիւնների դէմ:

Անբերրիութիւնը այնուեղ սով չի առաջացնում միշոյներ կան հաց զնելու, ճանապարհներ կան կրելու, կան պետական և հասարակական կազմակերպութիւններ, որոնցով հնարաւոր է լինում իր ժամանակին միշոյներ ծեռք առնելը:

Թէ ինչպիսի չափերի է հասնում սովը Ոռւսաստանում անբերրիութիւնների ժամանակ — ամենից լաւ մատնացոյց են անում տարեգրութիւններն և զրականական այլ լիշտատակարանները:

1601 թւակ. ոչ միայն դարձան, խոտ, կատու, մուկ և զանազան լէշեր էին ուտում, այլև բանը հասնում էր մարդակերութեան. Մոսկովի շուկաներում մարդկային մսով կարկանդակ էին ծախում:

Ալստեղ պէտք է նկատենք, որ անբերրիութեան տարիներում սովորաբար շատ լայն ծաւա-

լով տարածւում է այլեւայլ փոխանիւթերի (սուր-  
ռոգաթ) գործածութիւնը, որը սովածութեան երե-  
ւոյթների վրայ աւելացնում է նաև թունաւորման  
երեսիթներ:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ նման-  
օրինակ պայմաններում հիւանդացումն ու մահա-  
ցութիւնը զգալի չափով պիտի բարձրանան:

1844 թւականին Վիտերի և Պակովի նա-  
հանգներում սովի տիֆից մահացել են աղջաբնա-  
կութեան  $\frac{1}{10}$  մասը, իսկ Եկատերինոսյալի նա-  
հանգում 1849 թւակ. սովի տարիներում մահա-  
ցութիւնը հասնում էր հաղարին 130-ի, այսինքն  
չորս անգամ աւելի, քան Ռուսաստանի մահացու-  
թեան առանց այն էլ շատ բարձր նորման:

Նոյն այդ 49 թւակ. սովի մատնած նա-  
հանգներում միայն լոդախտով (ցինգա) հիւանդա-  
ցել է 250,000 հոգի և մեռել է 70,000 (պաշտօն.  
տեղեկութիւններ):

Օրինակները կարելի էր բաղմապատկել ան-  
վերջ, սակայն դա արդէն վերև լիշտածները կրկնել  
կնշանակէր:

Մի հարց էլ կարող է ծաղել. կարելի է սո-  
վածութեան ժամանակ նկատած հիւանդութիւն-  
ները սովին վերագրել. զուցէ այստեղ խնդիրը բակ-  
տերիաների<sup>\*)</sup> մէջն է. բաւական է մի կերպ  
ոչնչացնել վերջինները՝ կվերանան հիւանդութիւն-  
ներն ևս:

\*) Տե՛ս իմ «Երկու խօսք գիւղացուն» դբքոյկը:

Պէտք է ասենք, որ բակտերիական հիւան-  
դացումների ժամանակ ևս սովոր են նրա հետ կապ-  
ւած գոյութեան անբարեյացող պայմանները հա-  
մախարակների ծաւալման էական գործոնն են հան-  
դիսանում:

Այդ բանը մեծ ուժնութեամբ մատնացոյց  
էր արել գեռ հոչակաւոր զիտնական Ռուլով Վիր-  
խովը 1848 թւակ. Սիլեզիայի սովի տիֆը ուսում-  
նասիրելիս. նոյնն էն հաստատում փորձերի ար-  
գիւնքները, տեսական կշռալատութիւնները և  
ամենօրեայ դիտողութիւնները:

Ամեն ինչ բակտերիաներին վերագրելը և նրանց  
գէմ կռւելով սահմանափակւելը ժայրայեղութեան  
մէջ ընկնել է նշանակում:

Ներկայիս անբերրիութեանն էլ նոյնպիսի  
աղէտաներ է կցորդւած փոխանիւթով սննդառու-  
թիւն, հիւանդացումն, մահացութեան մեծացումն,  
մինչև իսկ մարդավաճառութեան, ինչպէս օրինակ  
կաղանի նահանդում աղջիկների վանառումը:

թ.

Առանձնապէս ցաւալին այն է, որ սովածու-  
թիւնը մեզանում ոչ թէ առանձին մի երեսիթ է  
ներկայացնում, այլ լոկ ժողովրդական մշտական,  
խրոնիքական հիւանդութեան՝ թերակերութեան  
սուր ծեր:

Բաւական է դիմել այն վիճակագրական տե-

զեկութիւններին, որոնք հաղորդում են առողջապահական կամ տնտեսական տեսակէտից գիւղացիների սննդառութեան հարցով պարապող գանազան հեղինակներ — և կհամոզւենք դրանում:

Այսպէս 46 նահանգի ազգաբնակութեան վերաբերմամբ հաստատւած է, որ նորմալից աւել սնունդ է ստանում  $15^0/0$ , հաղիւ բաւարար՝  $31,8^0/0$ , նորմալից պակաս՝ համարեա թերակերութեան հասնող՝  $52,7^0/0$ :

Մեր գիւղացու սննդառութեան սովորական վիճակը խրոնիքական թերակերութիւն է. ուստի բաւական է աննշան փոփօխութիւն դէպի վատր, որպէսզի սովի բոլոր սարսափները սկսւեն, նման ձինչե վիզը չըի մէջ գոնւող մարդու, որը իսկոյն կրսկուի խեղդել, եթէ չըի մակերեսովթը մի փոքր բարձրանայ:

Մէջ բերած իրողութիւնը աւելի ևս անբարեյացող կերպարանք կնդունի, եթէ ի նկատի առնենք, որ թերի կամ հաղիւ գոհացուցիչ ուտելիքը չափազանց միատեսակ է լինում, դժւարամարս և առանձին սննդարար նիւթերի յարաբերութիւնը անհամապատասխան. քիչ է սպիտակուցը, մանաւանդ կենդանականը (պէտք է ամբողջ քանակութեան  $60-70^0/0$  լինի, այն ինչ մեզանում՝  $15-20^0/0$ ), քիչ են ճարպերը և միայն ածխաջրային նիւթերը բաւարար չափով են կամ աւելի:

Դժւարամարս, շատ մեծ ծաւալով և ծանրութեամբ ուտելիքը մարսողական գործարանների մի շարք հիւանդացումներ է ծնում, ապա բացի մի

բանի յատուկ հիւանդացումներ՝ ինչպէս լնդախտը (ցինգա), հաւկուրութիւնը և այլն, առաջացնում է հասակի փոքրացում և այլասեռում:

Սովածութեան ենթակաների բանակի համեմատ մեծանում է, ի հարկէ, նաև չարիքի գումարը, իսկ բնոյթը նոյնն է մնում՝ կենսունակութեան նւազումն, կեանքի կրծատումն, այն է՝ նրա բանակի և որակի անկումը:

Անտարակոյս կեանքի երկոյթները բարդ լինելով, կեանքի, որտեղ սովը նրա միակ գործօնը չի հանդիսանում, դժւար է ճշգրտօրէն որոշել նրա աղղեցութեան բաժինը, այնուամենայնիւ փորձնական դիտողութիւնների արդիւնքները ապշեցուցիչ կերպով համապատասխանում են այն փաստերին, որոնք հանդէս է բերում իրականութիւնը:

Այդ փաստերը մատնանշում են, որ մննդառութեան վիճակի, հիւանդացութեան և մահացութեան մէջ կատարեալ զուգաղիպութիւն է տիրում:

Բոլոր հիւանդութիւնները պարփակող քիչ թէ շատ լրիւ վիճակագրութիւն ոչ մի տեղ չկայ. իսկ մեզանում դրա մասին խօսելն անդամ աւելորդ է:

Եւ մեծ մահացութեան շնորհիւ, կեանքի միշին տեականութիւնը, որ շվելացիների մէջ 50 տարի է, անգլիացիների մէջ՝ 45 տարի 3 ամիս՝ մեզանում, Ուռուսաստանում 28 տարի է:

Այդ պատճառով էլ Ուռուսաստանի ազգաբնա-

կութիւնը հասակի տեսակէտից շատ անբարելաջող  
է՝ մինչև 20 տարեկան հասակը մեզանում ապրում  
է 484 հոգի, իսկ Անզլիայում՝ 663. մինչև 40 տարե-  
կան հասակը մեզանում՝ 343, իսկ Անզլիայում՝ 539:  
Հասակաւորների, աշխատունակների թիւը հա-  
մեմատաբար փոքր է, որը ժողովրդի տնտեսական  
կացութիւնը վատթարացնող նոր գործօն է հան-  
դիսանում:

Եթէ այդ բոլորին աւելացնենք մի պատռւ-  
հաս ևս՝ ալկոհոլականութիւնը՝ սովի անհրաժեշտ  
հետևանքը, թուլացած օրգանեզմի մի խարազանը  
և միիթարութեան ու ինքնամոռացութեան միակ  
աղբիւրը, այն ժամանակ պարզ կլինի մեզ համար  
զրութեան ամբողջ սարսափելիութիւնը, որի մէջ  
դեղերում է սոված, կեանքի կուփի համար ան-  
հրաժեշտ ոյժերը թերակերութեամբ կորցրած աղ-  
դաբնակութիւնը:

•

Ժ.

Իւրաքանչիւր նոր սովագէպք մեր առաջ  
զրում է. «Մանէ, թէկէղ, փարէս», և մենք չենք  
կարող չխորհել այդ երեսոյթի պատճառնե-  
րին և նրա դէմ ուղղւելիք միշոցներին վերաբերեալ  
հարցերի մասին:

Վաղուց ի վեր տրւում էին այդ հարցերը և  
զանազան ժամանակներում զանազան պատասխան-  
ներ ստացւում:

Ալդպէս, օրինակ, ժողովուրդը ինքը անբեր-

րիութեան պատճառը չար ոգիների խարդաւանանք-  
ների և «մեղքերի» մէջն էր տեսնում:

Անբերրիութիւնները գեռ ներկայումս էլ ըն-  
դունած է գլխաւորապէս կլիմայական անբարելա-  
ջող պայմաններին վերազրել, իսկ անբերրիութիւն-  
ների յածախանալը՝ այդ պայմանների վատանալուն:

Սոյդ հայեայըը իսկապէս կիմքից սխալ է.  
միայն այն հանգամանքը արդէն, որ Արևմտեան  
եւրոպայում հողի բերրիութիւնը ոչ միայն չի  
նւազում, այլ մինչև իսկ աւելանում է՝ բաւականա-  
չափ հերքում է նրան:

Ալսպէս՝ Անզլիայում ժերդ գարում մէկ դե-  
սեատինը տալիս էր մօտ  $5\frac{1}{2}$  չետվերտ ցորեն,  
ժըրդ գարի վերջում՝ 11 չետվերտ, իսկ անցեալ  
գարի 80-ական թւականներին՝  $13\frac{1}{2}$  չետվերտ:

Ֆրանսիայում ժթ-րդ գարի ընթացքում բերըը  
մէկ դեսեատինին 5-ից մինչև 8 չետվերտի բար-  
ձրացաւ և այլն:

Պարզ է, որ խնդիրը կլիմայի մէջ չէ և յա-  
մենայն դէպս միմիայն կլիմայի մէջ չէ, որ կուլ-  
տուրականութիւնը հնարաւորութիւն է տալիս  
յաղթական կուլ մղել թէ՛ կլիմայական պայման-  
ների և թէ հողի ուժասպառութեան դէմ:

Սակայն մի կողմ թողնելով անբերրիութեանց  
պատճառներին և բերրիութիւնը բարձրացնելուն  
վերաբերեալ հարցերը, դժւար չէ եղակացնել, որ  
անբերրիութիւնը ինքը սովի գոհացուցիչ պատճառ  
չէ և չպէտք է լինի. որ սովի պատճառները ծա-

դում են ընդհանուր սոցիալ-տնտեսական պայմաններից:

Ժողովրդական առաջն արդէն ասում է. «Դաշը չէ չբերքութեան պատճառը, այլ զբուղանը», իսկ մենք կաւելացնենք «նաև գլուխը»:

Սովի պատճառներին վերաբերող հայեացքների համեմատ էլ միջոցներ էին գործադրում նրա դէմ, երբեմն յաշոր:

Մեզանում սկզբում, սովի դէմ իբրև ամենաէսական միջոց առաջարկուում էր պահը՝ ի հարկէ Աստուծոյ ցասումը շիշելու, նրա գութը հայցելու նպատակով:

Այսպէս ժէ-ըդ դարում սովի ժամանակ ոռուսաց թագաւորը հրաման էր արձակել. «Երկու շաբաթ պաս պահել, արբեցողութիւն չանել և հայհոյանք չգործածել»:

Սովի դէմ խելացի միջոցներով կռւելու առաջին փորձը Բորիս Գոդունովինը պիտի համարելորը հաստատուն հացագին սահմանեց և հասարակական աշխատանքներ մտցրեց:

Մոսկւայի լաւագոյն լիշտատակարաններից մէկը իվան Վասիլեհիչ զանգակատունն է, որ սովեալների ծեռով է շինած:

Պետրոս Մեծը գրաւում էր ունկորների հացը լոգուտ չունկորների (իբրև պարտք, ընկալագրով) — ահա մի օրինակ, որը հաստատում է, թէ կառավարութիւնը կարող է խախտել մասնաւոր սեփականութեան սկզբունքը, երբ՝ նրա կարծիքով, դա հասարակական անհրաժեշտ է համարւում:

Անթիւ սովագէպքերի ժամանակ գործադրուող բոլոր միջոցները թւելլը և քննելլը շատ երկար կր-քաշէր. բաւական է, եթէ ցոյց տանը դրանց ընդհանուր տենդենցիան (ուղղութիւնը) և զրա համար ամենից լաւ է դիմենք պաշտօնական աղբիւրներին:

Աշա Գաղտնի Կոմիտէի կարծիքը 1840 թւակ. «Եթէ կառավարութիւնը, անպայման վստահէլով տեղական զեկուցումներին, առատօրէն և անշրջահայեց կերպով նպաստներ բաժանէ, այն ժամանակ պահանջներն ու խնդիրները կարող են չափից դուրս բաղմանալ և կառավարութեան միջոցներից անցնել:

Կարիքի շնորհիւ գործաւոր դասակարդի մէջ առաջացած աշխատանքն ու գործունէութիւնը կրթուլանան:

Առաջ կրգալ ծուլութիւն և ձրիակերութիւն և այդպիսով կառավարութիւնը, ժողովրդին ֆիզիքական աղէտից պահպանելով, կարող է բարոյական ախտերի տարածման պատճառ դառնալ, ախտերի, որոնք էապէս անհամեմատ աւելի վնասակար և վտանգաւոր են. ուստի նպաստները բաժանելիս չափազանց շրջահայեց պէտք է լինել» . . .

Պարզ է, որ երկու հնարաւոր սխալներից՝ կամ պակաս և կամ աւելի տալուց ախտեղ աւելի կորստաբեր է համարւում երկրորդը, որ կարիքը մինչեւ իսկ բարեզդեցիկ է համարւում, եթէ միայն ժայրայեղ աստիճանի չհասնի:

Ապա 91—92 թւականի սովի ժամանակ ձրգումն է նկատում ժողովրդական աղէտի փաս-

տերը թաղցնելու, լռելու. արգելուում է նրանց մասին խօսելն էլ, գրելն էլ. հալածւում է նոյն խոկ «սով» խօսքը:

Վիճակագրական (ստատիստիքական) հետազօտութիւններ կատարել ցանկացող անձանց և հաստատութիւնների վերաբերմամբ աեղի ունեցած ճնշումները թւել անդամ անկարելի է. մինչդեռ այդ «տեղական» հետազօտութիւնները անհրաժեշտ կիմքեր են խելացի միջոցներ ձեռք առնելու համար:

Այդ բոլորի վրայ վերջապէս աւելանում է նաև մշտական թիւր հասկացողութիւնը և լաւագեսութիւնը զիւղացիների կացութեան ժանրութեան մասին. «Կանցնի. զիւղացին կրդիմանալ, չի կարելի միշտ կուշտ լինել, հողի խեղճ զաւակը արիստոկրատ հօ չէ»:

### ԺԱ.

Ժողովուրդը համեմատաբար չեղօք դիրք է բռնում սովադէպերի նկատմամբ:

Արևմուտքի պատմութեան մէջ յայտնի դրժգոհութեան և ցասման այնպիսի արտայայտութիւններ, ինչպիսիքն են զիւղացիական պատերազմները կամ աղբարային վերջին խոռվութիւնները Ռումինիայում՝ Ռուսաստանում չկան և չեն էլ եղել նախնում:

Զարգանում էր մուրացկանութիւնը, աւարառութիւնները, մեծանում էր մասնաւոր սեփականութեան գէմ ուղղած յանցագործութիւնները:

Թիւր — մի երեսիթ, որը նկատելի է ամենուրեք, երբ բարձրանում են առաջին անհրաժեշտութեան առարկաների գները — և սակաւ անգամ միայն փոքր յուղմունքներ էին տեղի ունենում:

Աչա թէ ինչ է ասում պրոֆ. Բեխտերելը. «Օրդանիզմի սննդառութեան թուլանալու հետ միասին թուլանում է նաև նրա նեարդա-հոգեկան էներգիան:

Դրա հետեանքն է լինում անձնական ընդհանուր նւաստացում, կրաւորականութիւն, մտաւոր աշխատունակութեան աւելի կամ պակաս նւազում, հոգեկան յուլութիւն (ալարկոտութիւն) և կամքի պակասութիւն. այդ բոլորից առաջ է գալիս անփութութիւն, անտարբերութիւն դէպի անձնական ու հասարակական գործերն և անվճռականութիւն»:

Աչքաթող չպիտի անենք սակայն, որ սննդառութեան վիճակը առհասարակ ժողովրդի հոգեկան աշխարհն ու տեմպերամենար որոշող միակ գործօնը չէ երբէք:

Կան ուրիշ շատ գործօններ, որոնց լիշտակումը երկար կրքաշէր և տեղն էլ չէ. չպէտք է միայն մոռանալ, որ դրանք կարող են ժողովրդին չեղօք դիրքից հանել, սահպել նրան իր ոյժերի ամբողջ մնացորդը հաւաքել՝ ողբերգական վիճակից դուրս գալու համար. ժողովորդը արդէն զարթնում է:

Հասարակական միաքը, ճիշտ է, զարթնեց. Հասարակութիւնը փորձեց իւր առաքելութիւնը (միսիան) կատարել, սակայն նա չի անցնում հա-

սարակ բարեգործութեան սահմանից, որը ապարդիւն է այնպիսի հսկայական չարիքի առաջ, ինչպիսին ֆիզիքական և բարոյական սովածութիւնն է:

Բայց այդպիսի բարեգործութեան դէմ էլ մեղանում արգելքներ է յարուցւում:

Չարիքը մեծ է և խորարմատ. մեղ կորուստ է սպառնում:

Սով, ցուրտ, հիւանդութիւններ, տեղ տեղ հարբեցողութիւն, մտաւոր խաւար, կեղեքումն, սակաւէողութիւն և հողազրկութիւն \*)՝ ահա մեր բաղմատանչ հողագործի բաժինը:

Կեղաստ, ցնցոտիներ հագին, բաղցից և վրշախեցոյս, խոցապատ և վիրաւոր նա իր ամբողջ կեանքի ընթացքում կնոջ և երեխաների հետ պատէպատ է զարնուում բաղցից:

Մեր զիւղացու սրտակտուր հառաչները վազուց ի վեր ծածկում են երկրի երեսը. տարէցտարի

\*) Ի գէպ. Միբոցյեանցի հրաշալի կալւածը, որ ծախւում էր բանկի միջոցով, կառավարութեան մնաց: Այժմ ծախւում է Արամեանցի կալւածներից մէկը (3000 գետառու). Հաւ կըլինէր, եթէ զիւղացիք կազմակերպւած և այդ կալւածը գնած լինէին. սակայն այդ մնում է անել տարաբաղդաբար Կովկասի Բարեգործական Ընկերութեան, որը դեռ միջոցներից զուրկ է. մեղանից ամեն մէկը պէտք է անդամակցէ այդ ընկերութեան. բացի այդ պէտք է աջակցել թէ կենդանի ժամանակ և թէ մահից յետոյ կատարւած կտակներով: Այդ Ընկերութիւնը զօրեղ է իր ծրագրով, նպաստենք նրան, ինչով կարող ենք. այն ժամանակ նա կենսունակ կըլինի և արձագանք կըտայ պատմական մոմենտին:

Հեծկառում է նա անդադար տղիտութիւնից, նման ծանր հիւանդի, որի կրծքում բուն է դրել չար ախտը:

Եւ երբ վրայ է հասնում անրերի տարին, զիւղացու հառաչները չափաղանց բարձրագոչ են դառնում նրանց դէմ խլանալու համար:

Այժմ պետութիւնն էլ սկսում է, կարծես, անհանգստանալ. նա սկսում է սովի դէմ «իւրովի» միջոցներ գործադրել և կամ զիւղացիներին հաց բաժանել, որ նրանք սովից վերջնականապէս մահասպառ չլինեն. հասկանալի է, որ այդ բոլորը գրեթէ մի կաթիլ չուր է ծովում:

Խզնուկ ողորմութեամբ չի բուժւի ժողովրդական վիշտը, ծանր հիւանդին չենք բժշկե. մի կում սառը ջրով:

Արասափելին ժամանակ առ ժամանակ տեղի ունեցող սովագէպերը չեն, այլ այն, որ մեր ժողովուրդը իրապէս երբէք ազատ չէ սովածութիւնից:

Ծայրայեղ աղքատութիւն, կատարեալ բայթայում՝ ահա թէ ինչն է սոսկալի:

Ո՞րտեղ է այդ յուսահատական կացութեան ելքը, ո՞վ կօգնէ զիւղացուն ոտի կանգնելու, ո՞վ նրան հող կրտայ, հարկերի լուծը կրվերցնի ուսից, նրան ազատութիւն և զիտելիքներ կրտայ:

ԺԲ.

Ի՞նչ պիտի անենք:

Համայնացումն (սոցիալիզացիա), աղդայնացումն և ստիպողական ապասեփականացումն —

դրանք դեղեցիկ խօսքեր են, սակայն ներկայումս,  
տիրող պայմաններում, ռւտոպիաներ են:

Դիւղացին երկու ճանապարհ ունի ընտրելու:  
Եթէ նա ծեռքը ծալած, անուշադիր թողնէ  
ներկայ բոլոր կարգերն և սպասէ, թէ երկինքը  
նրան բաղդ կ'ուղարկէ և կամ կառավարութիւնը  
ողորմութիւն ցոյց կրտայ դէպի նո՞ւ ինքը աւելի  
ևս կրքայքայւի, սովադէպերը աւելի յաճախ կր-  
կրկնւեն և աւելի սոսկալի կրլինեն, հիւանդութիւն-  
ներն ու մահը աւելի մեծ վայրագութիւններ կր-  
գործեն նրա մէջ:

Այդ ընթացքը բանը այնտեղ կրհասցնի, որ  
գիւղացիութեան կէսր մահացինչ կրլինի, իսկ միւս  
կէսր կիսավայրենի ծորտ կրդառնայ և ժողովուրդը  
վերջնականապէս կրկորչի. ժողովուրդը կարող է  
դուռըթիւն ունենալ միմիայն ամեն տեսակէտից  
առողջ գիւղացիութեան ծևով, գոնէ մեզանում:

Իսկ եթէ գիւղացիները խելքի դան, հասկա-  
նան իրանց գժբաղգութեան պատճառները և իրանց  
սեփական ոյժերով սկսեն աշխատել աւելի լաւ վի-  
ճակի հասնելու՝ այն ժամանակ իրանց զաւակներին  
աւանդ կրտան ոչ թէ սով, խաւար և ստրկութիւն,  
այլ հաց, լոյս և ազատութիւն:

Այդ կարող է անել մի՛միայն ժողովուրդը  
ինքը, իր կառավարութեան ծեռով՝ իր նոր, ժո-  
ղովրդական կառավարութեան ծեռով:

Իրաւագուրկի, իշխանութիւնից զուրկ Պետա-  
կան Դուման՝ շրջապատւած իւրաքանչիւր քալա-  
փոխին նրան արգելքներ յարուցանող պաշտօնեա-

ներով, անկարող է ժողովրդի համար իրաւունք  
ձեռք բերել:

Դուման պէտք է ժողովրդական իսկական  
ընտրեալներից կազմւած լինի, այսինքն՝ անձերից,  
որոնք ընտրւած լինեն ընդհանուր, ուղղակի, հա-  
ւասար և գաղանի ծայնատւութեամբ:

Ժողովրդական Դուման երկրուծ լիակատար  
իշխանութիւն պէտք է ունենայ:

Յլլպիսի Դուման միայն ժողովրդական իս-  
կական ներկայացուցչութիւն կրլինի, որը ոչ թէ  
ի վնաս ժողովրդի, այլ ամեն ինչ յօդուտ նրա կր-  
կատարէ:

Միմիայն այլպիսի ժողովրդական Դումալից  
կարող են գիւղացիք բոլոր հողը և բոլոր ազա-  
տութիւնները սպասել. միայն նա է ընդունակ գիւ-  
ղացուն աղքատութեան և խաւարի ճանկերից  
փրկելու:

Դրա համար գեռ շատ կռիւ, շատ զոհողու-  
թիւններ պէտք կրգան, սակայն այլ ելք չկայ:

Կամ կռիւ և յաջողութիւն, կամ ստրկութիւն  
և մահ:

#### ՃԳ.

Ներկայումս էլ, տիրող պայմաններումն ևս  
կուլտուրական կոիւր շատ բան կարող է անել.  
մենք բոլորս էլ պէտք է համակւենք հետեւեալ հին,  
բայց յաւէտ թարմ մնացող գաղափարներով՝ հողի  
խելացի մշակութիւն և տեխնիքական կրթութիւն —

այս արդէն կեանքի վերանորոգման համար մեծ օժանդակութիւն կըլինի:

Առաջն կարդր պէտք է գասել գիւղատնտեսութեան տեխնիկայի բարւոքման նշանակութիւնն և մշակելի հողամակարդակի բանակական ընդարձակումն. գիւղատնտեսութեան բոլոր ճիւղերի զարգացման պէտք է համապարփակ նշանակութիւն տալ (իսկ մեղանում առևտրական դպրոցների մասին են երազում, ինչպէս օրինակ Ախալցիսյում):

Մենք պէտք է մեր բոլոր ոյժը գործադրենք, որ երկրագործութիւնը մեղանում խորթ զաւակ չինի, որ նա չմնայ այն վիճակում, որի մէջ գտրւում է մինչև այժմ, սկսած զին ժամանակներից:

Երկրի յաւիտենական մշակը առաջւայ նման գրեթէ փայտէ արօրով է հերկում հողը, առաջւայ նման խղճուկ ու լզար է նրա տաւարը. ի նախատիս մեզ, ոչինչ չի ծեռնարկուում գիւղատնտեսութեան տեխնիկան բարձրացնելու համար:

Գերմանիայում, ուր ազգաբնակութիւնը մօտ երեք անգամ պակաս է, քան Ռուսաստանում, մօտ առան հաղար գիւղատնտեսական դպրոց կայ, Ռուսաստանում՝ մօտ երեք հարիւր (300), իսկ մեզանում, հայերիս մէջ՝ մէկ-երկու դպրոց, այն էլ ամենատրականները, և ոչ մի հատ դուա հայաբնակ քաղաքներում:

Կօօպերատիւ ընկերութիւններ, գիւղատնտեսական բանկեր, գիւղատնտեսութեան օժանդակիչ այլևայլ միութիւններ, որոնք այնքան տարածւած

են արտասահմանում, մեղանում զրեթէ բացակայում են. արտածութեան կազմակերպութիւնը շատ սկզբնական վիճակի մէջ է:

Այդպէս ուրեմն. մանր տնտեսութեան յառաջադիմութիւնը հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ լայն զարգացում ստանան կօօպերատիւ սկրդրունքները. ուստի մեր բոլոր բարեգործական ընկերութիւնների հոգսերը ուղղւած պիտի լինին այդ սկզբունքների արտայալման և ընդարձակման նպաստող պայմաններ ստեղծելու, գիւղատնտեսական կօօպերացիաների, միութիւնների, սինդիկատների և ընկերութիւնների գործում հասարակական և մասնաւոր նախաձեռնութեան նպաստելու:

Միջոցներ պէտք է ծեռնարկեն գիւղատնտեսական կրթութիւն տարածելու իր երեք աստիճանով էլ. ստորին կարգի՝ գործնական լրիւ կրթութեան պահանջների համեմատ, իսկ միջնակարգ՝ բարձրագոյն դպրոցի պատրաստելու պահանջների համեմատ:

Ազատ հիմքերի վրայ պէտք է զրւած լինեն հողապարտացուցիչ (միլիօրատիւ) \*) աշ-

\*) Հասարակական աշխատանքները, իբրև կարեթառը ազգաբնակութեան աշխատանքային օգնութիւն, ոչ միայն հնարաւորութիւն են տալիս անբերրիութիւնից վեասւած այլեայլ վայրերի ազգաբնակութեան անմիշական օժանդակութիւն ցցց տալու, այլ և բարւոքելով գիւղատնտեսութեան բնական պայմանները, ապագայ անբերրիութիւնների առաջն են առնում կամ նրանց կործանիչ հետևանքները թուլացնում:

խատանքները. հողի պարարտացման յատկացւած մանր փոխատութիւնը նախ և առաջ պիտի դուացնէ գիւղացու տնտեսութեան պահանջները:

Այս բոլորը աւելի կամ պակաս չափով կիրականացնէ զեմստոյական մանր միութիւնը, իսկական զեմստուօն:

Գիւղատնտեսութեան կարիքները մեղանում ուշադրութիւն են գրաւում առհասարակ սովորաբիներին և այն էլ կարելի է ասել լոկ խօսքերով:

Ֆրանսիան երկրագործութեան վրայ մէկ հոգուն տարեկան քսան կոպէկ է ծախսում, իսկ Ռուսաստանը՝ չորս կոպէկ:

Երբ զրա վրայ վաղուց ի վեր ուշադրութիւն դարձրած լինէինք, եթէ կառավարութիւնը մի շարք միջոցներով զարգացրած լինէր ժողովրդական կրթութիւնն և ինքնագործունեութիւնը, եթէ նա ծշտապէս և ուշադրութեամբ օժանդակած լինէր գիւղատնտեսութեան նրա բոլոր ճիւղերում, այն ժամանակ երեխ չէինք ապրի տնտեսական այս սուր ճգնաժամը, որի մէջ գտնուում ենք ներկայումս:

Երեխ գիւղատնտեսութեան բարենորոգումն ու նոր, աւելի կատարեալ ձեւերին փոխանցնելը աւելի էվոլիւսիօն ձանապարհով կրկատարեէք:

Սակայն քանի որ չափազանց շատ ժամանակ է անցել արդէն, քանի որ ժողովրդի ալքատացումն այնքան հեռու է զնացել՝ գիւղատնտեսութեան արդիւնաւորութիւնը բարձրացնելուն ուղղւած հասարակական ոյժերի լոկ յարումն չի կարող բաւա-

բար համարւել . . . առանց բացառիկ միջոցների չի կարելի կառավարւել, եօլա զնալ . . .

Մեր հասարակութիւնը բոլորովին անտարբեր է դէպի գիւղատնտեսական կրթութիւնը. նոչն անտարբերութիւնն է նկատուում տեղական հիմնարկութիւններ հաստատելու և գիւղատնտեսութեան օժանդակող ալլեալ միութիւններին և ընկերութիւններին աշակցելու գործում:

Գիւղատնտեսութեան վրայ կատարւելիք ալդարդիւնաշատ ծախսերի համար պէտք է ճարւեն միջոցներ, չեն կարող չժարւել. ալդ ծախսերը բեղմնաւոր կլլինեն:

Մենք ինքներս պէտք է օգնութեան գանք, ինքներս պէտք է մեղ օգնենք. այս գաղափարները պէտք է իւրացնենք, թող սրանք մասսայի սեփականութիւն լինեն, այն ժամանակ գործը գիւրին և յարմար կրնթանալ՝ ներկայ մոմենտին համապատասխան. ժամանակը չի սպասում:

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան ծրագիրը շատ ընդարձակ է և ճոխ. բոլորովին օրինական ճանապարհով կարելի է բուժել մեր հիւանդ հասարակութիւնը, թող ներւի մեղ, մեր այլասեռող ժողովուրիմ . . .

Մենք կարող ենք պահանջներ գնել Կովկ. Հ. Բարեգ. Ընկերութեան առաջ, եթէ բոլորս էլ վճարում ենք նրան և աշակցում. զոնէ ալդ ընկերութիւնը լաւ հիմքերի վրայ գնենք սկզբից և եթ. թող նա որոշ սիստեմով, հետևականութեամբ իրա-

կանացնէ կեանքում վերոյիշեալ ալս կամ ալն գա-  
զափարները:

Նատ բան մեզանից է կախւած. պէտք է յա-  
ձառութեածր և եռանդով ձգտենք կուլտուրական  
ծեռնարկութիւններն:

Պահանջենք հասունացող սերունդի համար  
գիւղատնտեսական և տեխնիքական կրթութիւն,  
աշակենք կովկ. Հ. Բարեղ. Ընկերութեան թէ՛  
խօսքով և թէ գործով:

Ճիշտ է, մեզանում չկայ սովի այնպիսի պատ-  
կեր, ինչպէս Հնդկաստանում, որտեղ մարդիկ փո-  
ղոցներումն են ընկնում — մեռնում. սակայն դա  
նրանից է, որ հասարակութիւնը և մասամբ կա-  
ռավարութիւնը Դումալի միջոցով օգնութեան հա-  
սան ազդաբնակութեան:

Թէկուզ մի շաբաթ գաղարեցրէք կերակրե-  
լուց, մի՛ տաք ծեր կոպէկները — և մենք հանդի-  
սատես կրլինենք տարափոխիկ հիւանդութիւնների  
այնպիսի աղէսներին, որոնց դէմ արդէն ոչ ոք  
կարողութիւն չի ունենայ կռիւ մղելու. իսկ քանի  
դեռ հնարաւորութիւն կայ կռւելու գէթ փոքրա-  
ծաւալ սննդատութեամբ, մենք պէտք է միջոցներ  
գտնենք և ծեռնարկութիւնների դիմենք, որպէսզի  
սոսկալի արհաւիրքի առաջն առնենք:

Գիտութիւնն ասում է, թէ երբ սովի տիֆն  
ու լնդախտը համաճարակի կերպարանք են ընդու-  
նում, դժւար է լինում նրանց մի շրջանում պա-

հել. Նրանք ներսողում են նաև այնտեղ, ուր չեն  
սպասւում . . .

Օգնենք ուրեմն. չմոռանանք և արմատական  
բուժումն:

Աւարտելով ներկայ գրքոյկը, մէջ բերենք մար-  
տի 29-ին Պետերբուրգում կայացած «Կանանց  
գիւղատնտեսական կրթութեան» համաժողովի մի  
քանի զիսաւոր որոշումները.

Քննւում էր իգական գիւղատնտեսական դրա-  
բոցների տիպը, որոնք գիւղի տնտեսական բարե-  
կեցութիւնը բարձրացնելու. զիսաւոր գործօններից  
մէկն են համարւել: Անհրաժեշտ է համարւած  
հիմնել իգական ստորին գիւղատնտեսական դպրոց-  
ներ զանազան բաժանմունքներով՝ համաձայն արն-  
տեսութեան այլեալ ճիշդերի և միջնակարգ գիւ-  
ղատնտեսական դպրոցներ մանկավարժական դա-  
սարաններով:

Քառամեայ գասրնթացով միջնակարգ դրա-  
բոցներում պէտք է ընդունւեն քաղաքացին դպրոց  
աւարտողները:

Մանկավարժական դասարաններ աւարտողները  
իրաւունք են ստանում գիւղատնտեսական ստորին  
և ժողովրդական դպրոցներում դասաւանդելու:

Միաժամ ցանկալի է համարւել երկու սեռի  
անձանց միատեղ ուսուցումը գիւղատնտեսական  
բուժոր դպրոցներում:

Այդ ուղիղ հանապարհն է ընտրել ոռւս կինը.

և այդ կողմից նա կը ծգտէ բարձրացնել դժբաղդ  
գեղշկուհուն և միատեղ ուսուցման շնորհիւ՝ հաս-  
տատուն և ամուր հիճք կը դնէ, ի միջի ալոց նաև  
կեանքի մէջ, գոյութեան կուռում երկու սեռի ան-  
ձանց իրաւահաւասարութեան զաղափարը մտցնելու:  
Հետեմի՛ր, հայուհի, քո աւագ քը ոչը:



Ա. ԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԴԱՆ

- |  |       |
|--|-------|
| 21. Խնչ է կաշու հիւանդութիւնը . . . . .                                    | 15 կ. |
| 22. Երիտասարդութիւն և ծերութիւն . . . . .                                  | 15 "  |
| 23. Առողջ ու հիւանդ երեխայի ոգին . . . . .                                 | 20 "  |
| 24. Ուղեղի սիֆիլիսը (գլխի և ողնաշարի) . . . . .                            | 20 "  |
| 25. Ստամոքսի կատարը . . . . .  | 20 "  |
| 26. Քուն և երազ (մի պատկերով) . . . . .                                    | 25 "  |
| Մեծագիր պատկեր «Քուն և երազ» առանձին                                       | 10 "  |
| 27. Գործարան թէ երկրագործութիւն . . . . .                                  | 15 "  |
| 28. Սնապաշտութիւն ու կախարդութիւն . . . . .                                | 20 "  |
| 29. Մտերմական խորհութանիներին (օնանիզմ)                                    | 20 "  |
| 30. Գոյութեան կրիւ . . . . .   | 20 "  |
| 31. Թուղջլֆ Վիրխով . . . . .   | 25 "  |
| 32. Սէր և խանդ (մի պատկերով) . . . . .                                     | 20 "  |
| 33. Անառակութիւն և պոռնկութիւն . . . . .                                   | 20 "  |
| 34. Նուէր հայ զինորին . . . . .  | 20 "  |
| 35. Նուէր հայ վարժապետին (դպրոցական առող-<br>ջապահութիւն), . . . . .       | 20 "  |
| 36. Նուէր հայ դպրոցականին (Մեր օրերը) . . . . .                            | 10 "  |
| 37. Ուժժամեայ բանուորական օր (մի պատկ.) . . . . .                          | 10 "  |
| 38. Ժողովրդական առողջապահութիւն (հիւանդա-<br>ցում և մահացութիւն) . . . . . | 10 "  |
| 39. Երկու խօսք գիւղացուն . . . . .   | 10 "  |
| 40. Սով . . . . .  | 10 "  |

Պահեստը գտնւում է Ս.-Պետերբուրգ, «Պուշկինեան Արագատիպ»,  
Լեշտուկով փող., տ. 4

ՀՀ Ազգային գրադարան



NL0211206

42.720

Пушкинская Скоропечатня  
С.-Петербургъ, Лештуковъ пер. 4

Գիւն է 10 ԿՈՊ.